ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻՑ

Ապրել արտակարգ կյանք - Մաս 3

«Որովհետեւ Տերն է տալիս իմաստությունը …Որովհետեւ իմաստությունը քո սիրտը կմտնի, և գիտությունն ախորժելի կլինի քո հոգուն: Երանի այն մարդին որ իմաստություն է գտել! Գերագույնը իմաստությունն է. իմաստությո՛ւն ստացիր: Գնալիս քո քայլերը արգելքի չպիտի հանդիպեն, և վազելիս չպիտի սայթաքես:»
Առակներ 2-6, 10, 3:13, 4:7, 12

ԱՍՏԾՈ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (ԽՈՍՔԸ) ԿԱՐՈՂ Է…

- **Ամրապնդել Հավատքդ**

«Այժմ ձեզ հանձնում եմ Աստծուն ու նրա շնորհի խոսքին, որ կարող է կառուցել և ձեզ ժառանգություն տալ բոլոր սրբացածների հետ:»
Գործք Առաքելոց 20:32

- **Առաջնորդել Որոշումներդ**

«Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհի համար:» Սաղմոսներ 119-105

- **Բարելավել Կյանքդ**

«Այս օրենքի գիրքը թող չհեռանա քո շուրթերից, այլ գիշեր-ցերեկ դրա մասի՛ն մտածիր, որպեսզի պահես և կատարես ամենը, ինչ որ գրված է դրա մեջ. այն ժամանակ ճանապարհը դու հաջող կդարձնես և այն ժամանակ հաջողություն կունենաս:» Հեսու 1:8

- **Փոխել Սիրտդ**

«Կենդանի է Աստծու խոսքն ու ազդեցիկ և ամեն մի երկսայրի սրից առավել կտրուկ է. այն թափանցում է մինչև շնչի և հոգու, հոդերի և ողնածուծի բաժանումը, քննում է սրտի խոկումներն ու խորհուրդները:»
Եբրայեցիներին 4:12

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՈԹԱՑՈՒՄ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵՒՈՐԵԼՈՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԴԱՐՁՆԵԼ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ

1. Խանդավառությամբ մոտեցիր խոսքին

«Նորածին մանուկների պես փափագե՛ք բանական, անխարդախ կաթը, որպեսզի նրանով աճեք փրկության համար.» Ա Պետրոս 2:2

2. Հետևողականորեն փորձարկիր այն

«Սրանք, որ ավելի ազնիվ էին, քան Թեսաղոնիկեում եղողները, խոսքն ամենայն հոժարությամբ ընդունեցին և ամեն օր քննում էին Սուրբ Գիրքը՝ տեսնելու, թե արդյոք դա այդպե՞ս է:» Գործք Առաքելոց 17:11

«Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի համաձայն չի գնում և մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ծաղր անողների աթոռի վրա չի նստում, Այլ նրա հաճույքը Տիրոջ օրենքի մեջ է, և ցերեկ ու գիշեր մտածում է նրա օրենքի մասին Նա ջրերի հոսանքի մոտ տնկված ծառի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը թառամելով չի թափվում, և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան:» Սաղմոսներ 1:1-3

3. Քննարկիր այն այլոց հետ

«Այս խոսքերը, որ ես այսօր պատվիրում եմ քեզ, քո սրտում լինեն: Դրանք կրկին սովորեցրո՛ւ քո որդիներին, խոսի՛ր դրանց մասին քո տանը նստած ժամանակ, ճանապարհ գնալիս, պառկելիս և վեր կենալիս:» Բ Օրենք 6:6-7

4. Անմիջապես գործի դիր այն

«Խոսքը կատարողնե՛ր եղեք և ոչ միայն լսողներ, որ ինքներդ ձեզ խաբեք: Որովհետև խոսքը միայն լսողը և չկատարողը նման է այն մարդուն, որ հայելու մեջ ակնապիշ դիտում է իր սեփական դեմքը, քանի որ տեսնում է ինքն իրեն, անցնում գնում է և իսկույն մոռանում, թե ինչպիսի՛ն էր:» Հակոբոս 1:22-24

«Մեծ խաղաղություն կա քո օրենքը սիրողների համար, և գայթակղություն չկա նրանց համար:» Սաղմոսներ 119:165

Հաջորդ Քարոզի Թեման

ԿՅԱՆՔՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՀԱՎԱՏՔՈՎ

Հովիվ Սարո Խաչիկեան